



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Թ Ի Վ 10**

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝  
2019 Թ. ՀՈՒԼԻՍԻ 3-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ**

Օրակարգում՝

1. 2018-19 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:
2. Հեռակա ուսուցման պետական ավարտական քննությունների նախագահի հաշվետվությունը:
3. Պրոֆեսորադասախոսական կազմի ծանրաբեռնվածությունների կազմման վիճակը ամփոփում:
4. Հայոց լեզվի ամփոփ տարեկան հաշվետվությունը:
5. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտխորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը իր խոսքի սկզբում տեղեկացրեց, որ գիտխորհրդի 29 անդամներից նիստին մասնակցում է 21-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ծանոթացրեց օրակարգի հարցերին, որոնց քննարկումը միաձայն ընդունվեց բաց քվեարկությամբ:

**1-ին հարցի** առիթով պրոֆ. Ա. Ավագյանը ձայնը տվեց դեկանի տեղակալ դոց. Ա. Սարգսյանին: Վերջինս ամփոփ ներկայացրեց 2018-19 ուստարվա 2-րդ կիսամյակի քննա-

շրջանի արդյունքները: Նա մասնավորապես ընդգծեց, որ քննաշրջանն անցել է բնական հունով, չի նկատվել արտառոց կամ անհանգստացնող որևէ դեպք, և արդյունքները գոհացուցիչ են:

Գիտական խորհրդի նախագահը, սակայն, խորհրդի անդամների ուշադրությունը հրավիրեց մի տարօրինակ երևույթի վրա. խոսքը վերաբերում էր ԵՊՀ-ի արտասահմանյան գրականության ամբիոնի դոց. Սերգեյ Ստեփանյանի անցկացրած քննությանը հայ բանասիրության ֆակուլտետի առկա բակալավրիատի 2-րդ կուրսում: Պրոֆ. Ա. Ավագյանն իր մտահոգությունն արտահայտեց քննության արդյունքների համար. բանից պարզվում է, որ ամբողջ կուրսը քննության ժամանակ դրսևորել է գրեթե 100 %-ոց արդյունք, և ուսանողներն ստացել են միայն «գերազանց» գնահատականներ: Դրանով, ըստ դեկանի, կոպտորեն խախտվել է անաչառության հաշվեկշիռը: Նա հայտնեց, որ այդ առիթով արդեն իր մտահոգությունն է հայտնել արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ պրոֆ. Ա. Առաքելյանին, որն էլ խոստացել է ուսումնասիրել խնդիրը:

**Օրակարգի 2-րդ հարցը** նվիրված էր հեռակա ուսուցման պետական ավարտական քննությունների նախագահի հաշվետվությանը: Նախագահ Վ. Գրիգորյանը ներկայացրեց հետևյալ պատկերը.

- 2018-2019 ուստարում «Հայոց լեզու» առարկայից ավարտական աշխատանք է պաշտպանել 8 ուսանող, որից 5-ը՝ ժամանակակից հայոց լեզվից, 2-ը՝ հայոց լեզվի պատմությունից, 1-ը՝ լեզվաբանությունից:

Ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքներն են՝

ժամանակակից հայոց լեզվի ամբիոն՝ 5 ուսանող, որոնցից 3-ը ստացել են գերազանց, 2-ը՝ լավ,

հայոց լեզվի պատմության ամբիոն՝ 2 ուսանող, որոնցից 1-ը ստացել է լավ, 1-ը՝ բավարար,

լեզվաբանության ամբիոն՝ 1 ուսանող, ով ստացել է լավ գնահատական:

Պետական քննություն հանձնող երկտարեցի 2 ուսանող ստացել է բավարար:

2018-19 ուստարում «Հայ գրականություն» առարկայից ավարտական աշխատանք է պաշտպանել 12 ուսանող, որից 7-ը՝ հայ գրականությունից, 3-ը՝ հայ նորագույն գրականությունից, 2-ը՝ գրականության տեսությունից և գրաքննադատությունից:

Ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքներն են՝

հայ գրականության ամբիոն՝ 7 ուսանող, որոնցից «գերազանց» գնահատական ստացել է 1, լավ՝ 2, բավարար՝ 4 ուսանող (մեկ ուսանող՝ Արմինե Ստյոպայի Շահգալոյանը, չի ներկայացել պաշտպանության),

հայ նորագույն գրականության ամբիոն՝ 3 ուսանող, գերազանց՝ 2, լավ՝ 1,

գրականության տեսության և գրաքննադատության ամբիոն՝ 2 ուսանող, որոնք ստացել են «լավ» գնահատական:

Ավարտական աշխատանքների պաշտպանությունը անցել է գործող ընթացակարգին համապատասխան: Ավարտական աշխատանքների թեմաները արդիական էին, տարաբնույթ, ունեին անհրաժեշտ գիտագործնական ուղղվածություն, գիտական և ճանաչողական արժեք: Կային նաև զուգադրական բնույթի աշխատանքներ: Ինչպես բովանդակությամբ, այնպես էլ կառուցվածքային ու կատարողական առումով ավարտական աշխատանքները համապատասխանում էին նման աշխատանքներին ներկայացվող պահանջներին: Դրանցում հստակ նշված էին նպատակը, խնդիրները և ակնկալվող արդյունքները, հիմնավորված էր արդիականությունը, ուսումնասիրված էր համապատասխան գրականություն, և ներկայացված էին հետազոտության գործնական արդյունքները:

Ուսանողները կարողացան խոսքի տրամաբանական կառուցվածքով, լեզվական իրազեկություններով, թեմայի և աշխատանքի վերաբերյալ հարցերին տրվող պատասխանների և պարզաբանումների, բանավիճելու ու փաստարկներ բերելու կարողություններով արժանանալ համապատասխան գնահատականների: Այնուհանդերձ, կային նաև սակավաթիվ աշխատանքներ, որոնցում մասնակիորեն էր կատարված թեմային առնչվող գրականության վերլուծություն, հիմնավորված չէին սեփական մոտեցումները ուսումնասիրվող խնդրի վերաբերյալ, թեմաների ձևակերպումները երբեմն շատ ավելի ընդհանրական բնույթ էին կրում, քան դրանցում կատարված աշխատանքն էր:

Վերոգրյալը նկատի ունենալով՝ կարծում ենք, որ անհրաժեշտ է այսուհետև ևս ավարտական աշխատանքների համար այնպիսի թեմաներ առաջադրել, որոնք արդիական են և բխում են հայերենագիտության առկա հիմնախնդիրներից: Թեմաներ առաջադրելիս հարկ է առավել մեծ ուշադրություն դարձնել զուգադրական բնույթի աշխատանքներին՝ կարևորելով ուսանողների ինքնուրույն վերլուծական կարողություններն ու գործնական հմտությունները դրսևորելու փաստը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ավարտական աշխատանքների թեմաների ձևակերպումները երբեմն ընդհանրական բնույթ էին կրում և թեկնածուական կամ դոկտորական աշխատանքների վերնագրեր էին հիշեցնում, երբեմն նկատվում էր ավարտական աշխատանքի վերնագրի և բովանդակության անհամապատասխանություն, կարծում ենք, անհրաժեշտ է ավարտական աշխատանքների թեմաները քննարկել ամբիոնների նիստերում թեմաների հետ կապված թյուրլմբոնումներին խուսափելու համար:

Անհրաժեշտ է առավել մեծ ուշադրություն դարձնել բակալավրիատի ավարտական աշխատանքների կատարման որակին՝ կարևորելով դրանցում փաստական նյութի վերլուծությունը, դասակարգումը և զուգադրումը, փաստարկված դատողությունների ու եզրահանգումների առկայությունը, առկա հիմնախնդիրների լուծման ասպարեզում ժամանակակից մեթոդաբանության կիրառումը:

Կարևոր ենք համարում նշել, որ, ինչպես նախորդ, այնպես էլ 2018-19 ուստարվա ավարտական աշխատանքների պաշտպանության գործընթացը ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում կազմակերպված էր պատշաճ մակարդակով, պահպանված էին ընթացակարգային բոլոր պահանջները: Հատկապես ցանկանում ենք բարձր գնահատել բանասիրական ֆակուլտետի դեկան Ա. Ավագյանի կատարած մեծ աշխատանքը, որի արդյունքում պետական քննական հանձնաժողովի աշխատանքները ընթացել են դեկանատի կողմից սահմանված ժամանակացույցի համապատասխան, քննական կարգի խախտումներ չեն եղել, և ամփոփիչ ատեստավորման քննական հանձնաժողովն աշխատել է գործնական և փոխադարձ վստահության մթնոլորտում:

**Օրակարգի 3-րդ՝** ամբիոններում պրոֆեսորադասախոսական կազմի ծանրաբեռնվածությունների կազմման վիճակի **հարցը**, խոր մտահոգություն առաջացրեց գիտխորհրդի

անդամների մեջ: Առանց բացառության՝ բոլոր ամբիոնների վարիչները հայտնեցին, որ ստեղծված է գրեթե աղետալի կացություն, և ելքեր են փնտրվում ստեղծված իրավիճակից դուրս գալու համար՝ ակնկալելով ռեկտորատի աջակցությունը:

Գիտական խորհուրդ, ըստ **օրակարգի 4-րդ հարցի**, լսեց հայոց լեզվի ամբիոնի վարիչ պրոֆ. Յու. Ավետիսյանի տարեկան հաշվետվությունը: Նա մասնավորապես ասաց հետևյալը.

- Ամբիոնի աշխատակազմը ունի երեսուներեք անդամ, որոնցից երեքը՝ դոկտոր, քսանմեկը՝ դոցենտ, յոթը՝ ասիստենտ, մեկը՝ դասախոս:

Ամբիոնը ունի առկա ուսուցման երեք, հեռակա ուսուցման երկու ասպիրանտ:

Ամբիոնում աշխատում է երեք գործավար՝ մեկուկես հաստիքով:

#### ***Գիտական մաս***

#### ***2018 -2019 թթ. ամբիոնը հրատարակել է՝***

● *երեք մենագրություն՝ Յուրի Ավետիսյան՝ «Արդի հայերենի կետադրության հիմնախնդիրներ», Եր., 2019, Յակոբ Չոլաքեան՝ «Արեւմտահայերէն. կանոնակարգ եւ խնդիրներ», Բ. Գիրք, Եր. 2019, «Գործնական արեւմտահայերէն», Անթիլիաս, 2018:*

● *ուսումնասօժանդակ երկու ձեռնարկ՝ Հ. Զաքարյան, Յու.Ավետիսյան, Ոճագիտություն, Տեքստագիտություն, հայոց լեզվի պատմություն, Եր., 2018; Յու. Ավետիսյան, Հ. Զաքարյան, «Կետադրություն»:*

Տպագրության ընթացքի մեջ են երեք աշխատանք՝ **Զարիկ Աղաջանյանի** «Շեշտը և շեշտադրության նորմավորման հարցերը հայերենում», «Անորոշ դերբայը ստորոգյալի կազմում. Եղանակավորող + ԱԴ կառույցը» և համահեղինակների՝ «Իրավաբանական գրագրության լեզուն» (**Յու. Ավետիսյան, Լ. Սարգսյան, Ա. Մկրտչյան**):

Ամբիոնի դասախոսների տպագրած հոդվածների քանակը չի հասնում **երկու տասնյակի**:

Ամբիոնի աշխատակիցները շարունակում են իրականացնել Գիտության պետական կոմիտեի թեմատիկ-պայմանագրային աշխատանքը (Արդի հայերենի բառապաշարի զարգացման հիմնախնդիրներ):

#### ***Կրթական մաս***

Ամբիոնի մագիստրատուրայի առաջին կուրսում սովորում են 21 մագիստրանտներ: Մագիստրատուրայում ներառել ենք նոր դասընթաց՝ «Տեքստի խմբագրում և հրատարակչական գործ» խորագրով:

Ամբիոնը դասախոսներից **Լիանա Սարգսյանը** մարտին մեկամսյա դասախոսություններ է կարդացել Իրավաբանական ակադեմիայում և Վերաքննիչ դատարանում իրավաբանական գրագրության վերաբերյալ:

### ***Ծրագրային մաս***

- 1) Պետք է ավելի գրավիչ դարձնել ամբիոնի կողմից մատուցվող դասընթացների բովանդակությունը և թարմացնել մատուցման ձևերը՝ ներգրավելով տեխնիկական միջոցներ: Դասընթացների բովանդակությունը բակալավրատում ուղղորդել առավել գործնական անհրաժեշտ նյութի ուսուցմանը, մագիստրատուրայում ներառել նոր նպատակային դասընթացներ:
- 2) Ընթացքի մեջ են նոր դասագրքերի և ձեռնարկների ստեղծման աշխատանքները՝ *Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա /հայ բանասիրության ֆակուլտետի ուսանողների համար/; Մասնագիտական լեզու և խոսքի մշակույթ /տեսագործնական ձեռնարկ Բնագիտական ֆակուլտետների առաջին կուրսի ուսանողների համար/:*

### ***Առաջարկությունների մաս***

**Ամբիոնի վարիչը գործընկերներին հորդորում է.**

**ա/** բակալավրատում և մագիստրատուրայում ջանալ պահպանել հայոց լեզու և հայ գրականությունն առարկաների գնահատման համամասնությունը՝ հավասարաբարությունը կամ հավասարաբաժանությունը: Հարցի լուծման օբյեկտիվ հիմքեր ստեղծելու նպատակով դեկանատին առաջարկել կատարել վիճակագրություն առ այն կամ այնի վերաբերյալ, թե ինչ համապատասխանություն կամ անհամապատասխանություն կա բանասիրության ֆակուլտետի երկրորդ, երրորդ և չորրորդ կուրսերում հայ գրականությունից և հայոց լեզվից ստացած գնահատականների միջև:

**բ/** Օպտիմալացման ուղտը շուտով չոքելու է բանասիրական ֆակուլտետի դռանը. մտածենք մեր անելիքների մասին, գտնենք ֆակուլտետի և հայ բանասիրության շահերից

բխող լուծումներ, որ հանկարծ չհայտնվենք անսպասելիորեն մեզ հրամցված և մեզ ոչ ձեռնառու կառուցվածքների առջև:

Գիտխորհուրդը հայոց լեզվի ամբիոնի տարեկան հաշվետվությունը գնահատեց բավարար:

#### **Ընթացիկ հարցերում՝**

**Լ Ս Ե Ց Ի Ն** – ԵՊՀ դոցենտ, բ. գ. թ. **Նորայր Բերիկի Պողոսյանի** դոկտորական ատենախոսության վերնագրի փոփոխության հարցը:

**Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն** – պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը, Լ. Հովսեփյանը, Ա. Մակարյանը և այլք:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն** – բ.գ.թ., դոց. Նորայր Բերիկի Պողոսյանի դոկտորական ատենախոսության վերնագիրը վերաձևակերպել հետևյալ կերպ՝ «Վաղ աշխարհաբարի ձևավորումը և զարգացումը» /Ժ.02.01 «Հայոց լեզու» մասնագիտությամբ/:

**Լ Ս Ե Ց Ի Ն** - «Հայերենի խոսքի մասերի ուսմունքը» դասընթացը intranet և Moodle համակարգեր ներմուծելու հարցը:

**Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն** – պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը, Լ. Հովսեփյանը, Ա. Մակարյանը և այլք:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն** – Հաշվի առնելով դասընթացների՝ intranet և Moodle համակարգեր ներմուծելու անհրաժեշտությունը՝ հաստատել ամբիոնի որոշումը և թույլ տալ բ.գ.թ., դոց. Ս. Գրիգորյանին այն ներմուծելու համակարգ:

**Լ Ս Ե Ց Ի Ն** - <<Հայոց լեզվի պատմություն-2>> դասընթացը intranet և Moodle համակարգեր ներմուծելու հարցը:

**Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն** – պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը, Լ. Հովսեփյանը, Ա. Մակարյանը և այլք:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն** – Հաշվի առնելով դասընթացների՝ intranet համակարգում ներմուծելու անհրաժեշտությունը՝ հաստատել ամբիոնի որոշումը և թույլ տալ բ.գ.թ., պրոֆ. Ա. Աբաջյանին և բ.գ.թ., դոց. Ն. Դիլբարյանին այն ներմուծելու intranet համակարգ:

**Լ Ս Ե Ց Ի Ն** – Ընդհանուր լեզվաբանության ամբիոնի առկա ասպիրանտ **Լիանա Վարդանի Ազիզյանին** թեկնածուական ատենախոսության թեմա հաստատելու և գիտական ղեկավար նշանակելու հարցերը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Լ. Հովսեփյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, դոց. Վ. Պետրոսյանը և ուրիշներ:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն** - 1. Հաստատել **Լիանա Վարդանի Ազիզյանի** թեկնածուական ատենախոսության թեման՝ «Հին հայերենի և լատիներենի հնչույթաբանական համակարգերը (գուգադրական քննություն)»՝ Ժ.02.02 մասնագիտությամբ: Գիտական ղեկավար հաստատել ամբիոնի վարիչ բ. գ. թ., դոցենտ Վ. Ջ. Պետրոսյանին:


2. Միջնորդել ԲՈԿ-ին՝ վավերացնելու այն:

Վերջում պրոֆ. Ա. Ավագյանը, ամփոփելով գիտական խորհրդի նիստը, շնորհակալություն հայտնեց մասնակիցներին, ցանկացավ նրանց ամառային բարի արձակուրդներ, և նիստը հայտարարվեց ավարտված:

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

**ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ**

**ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ**



**ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ**